հաստատվում է
հաստատվում է

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի թիվ 2
միջն. դպրոցի 2022 – 2023 ուստարի

« ԳՐԱԴԱՐԱՆ »

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

գրադարանավար՝ Ն. Պետրոսյան

Նոր գեղի 2022թ.

Գրադարանի հիմնական խնդիրները

Նոր Գեղիի Յուրի Երիցյանի անվան N2 միջնակարգ դպրոցի գրադարանի հիմնական խնդիրները ստեղծված դասագրքերի ֆոնդի պահպանությունն և այն ժամանակին ու ճիշտ աշակերտներին հասցնելն է:

Քանի որ գրադարանը բացի դասագրքային ֆոնդից չունի գեղարվեստական գրականության մեծ քանակությամբ ֆոնդ, որը շատ ցավալի է: Ապա մեր հիմնական խնդիրներից մեկն էլ գեղարվեստական գրականության ֆոնդի ստեղծումն է՝ /որը շատ ջանքեր է պահանջում/ աշակերտների, ծնող-ների նվիրատուների միջոցով:

Որպեսզի աշակերտների մոտ առաջ գա գրքի հանդեպ սեր և ափսոսանք, զարգանա նրանց բառապաշարը, համագործակցելով դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչների, դասվարների, մեթոդ միավորման նախագահների հետ հաճախակի պետք է կազմակերպվի կարդացած գրքերի քննարկում, մեկնաբանում, մեջբերում:

Գրադարանի հիմնական նպատակները

Գրադարանի հիմնական խնդիրները ու պարտականությունները պետք է լինեն այն, որ ջանք ու եռանդ չխնայենք, ամեն միջոց ձեռնարկենք որպեսի 2022-2023 ուսումնական տարում ավելի ընդարձակենք գրադարանային հնարավորությունները և կարողանանք շատ ջանասեր, աշխատասեր, գրագետ, կարդացած, ամեն ինչից տեղյակ ընթերցողներ ընդգրկենք:

Աշխատանք կատարելու ժամանակ առաջին հերթին պետք է հաշվի առնել ընթերցողների տարիքային առանձնահատկությունները, կրթական մակարդակը զբաղմունքը, մասնագիտությունը, նախասիրությունը, մասնագիտություն ձեռք բերելու ցանկությունը:

Աշխատել ընթերցողի նկատմամբ լինել քաղաքավարի, հոգատար, համբերա-տար, կարողանալ բավարարել նրանց պահանջները:

Յուրաքանչյուրիս ցանկալի է ունենալ գրագետ, աշխատասեր, պրպտող, դեպի ապագան նայող ուշիմ աշակերտներ:

h/h	աշխատանքի բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարողը	ծանոթություն.
1.	Կոմպլեկտավորել դասագրքերը: Դասղեկների, ուսուցիչների, դասվարների օգնությամբ դասագրքերը բաժանել աշակերտներին:	օգոստոս	գրադարանավար. դասղեկ, դասվար	+
2.	Առանձնացնել գործածությունից դուրս եկած դասագրքերը: Ակտավորել	սեպտեմբեր	հաշվապահ, գրադարանավար	+
3.	Առանձնացնել գործածության մեջ գտնվող այն դասագրքերը, որոնք վնասված են: Բարձր դասարանի աշակերտների, ջոկատավարի, տեխնոլոգիայի ուսուցչի հետ	սեպտեմբեր հոկտեմբեր	ուսուցիչ, աշակերտ, գրադարանավար	+

	վերանորոգել դասագրքերը, կարգավորել , նույնիսկ եթե հարկ է կազմել:			+
4.	Ընտրել գրադարանի խորհուրդ ուսուցիչներից և բարձր դասարանի աշակերտներից: ա. Ս. Մարտիրոսյան բ. Ա. Պետրոսյան գ. Ա. Մելքոնյան դ. Ռ. Հայրապետյան / աշակերտ/ ե. Ի. Զեյթունյան /աշակերտ /	սեպտեմբեր	գրադարա-նավար	+
5.	Աշխատանք տանել կորած դասագրքերը ձեռք բերելու ուղղությամբ, պակասը լրացնել ծնողների, ուսուցիչների և աշակերտների օգնությամբ	սեպտեմբեր, մայիս	գրադար. ուսուցիչ, ծնող	+
6.	Հրավիրել ուսմասվարին կից դասղեկների խորհրդակցություն՝ դասագրքերի բաժանման, վարձավճարների գանձման հարցերը պարզելու նպատակով, որպեսզի ոչ մի ծնողի մութ չմնա գրքերի գումարները:	սեպտեմբեր	ուսմասվար ծնող գրադար. դասղեկ	+
7.	1-ի, 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում անցկացնել ընթերցանություն: Որևէ հեքիաթի բեմականացում: Զրույցներ ունենալ աշակերտների հետ՝ կարդացած գրքերի բովանդակության մասին:	յուրաքանչյ. կիսամյակ	դասվար, աշակերտ	+
8.	Առաջարկել մանկավարժական խորհրդի հաստատմանը անապահով երեխաների վարձավճարները մուծելու նպատակով:	սեպտեմբեր	գրադարան. տնօրեն դասղեկներ	+
9.	Հաճախակի կազմակերպել դասա գրքերի ստուգում	յուրաքանչյուր ամիս	աշակերտ, դասղեկ, գրադարանավար	+

10.	Համաձայն հաստատության կանոնադրության՝ ապահովել սովորողների և մանկավարժների գրադարանային հավաքածուից և տեղեկատվական միջոցներից անվճար օգտվելու իրավունքը, տրամադրել ուսումնական նյութի յուրացման համար համապատասխան տեղեկատվություն / գիրք, թերթ, ամսագիր,տեսողական նյութեր /:	ամբողջ տարին		
11.	Համապատասխան պայմաններ ստեղծել սովորողների համագործակցին, ստեղծագործական, հետազոտական և այլ հմտությունների զարգացման համար ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից:			
12.	Տոնական և հիշարժան օրերին նվիրված անկյունների ձևավորման նյութեր առանձնացնել		գրադարանավար	
13.	Համագործակցել այլ գրադարանների և մշակութային հիմնարկների հետ՝ գրադարանային հավաքածուի համալրման և արդյունավետ փորձի ներմուծման նպատակով:			
14.	Անցկացնել միջոցառումներ ,, Մանկական գրքերի շաբաթ .. խորագրով		ուսուցիչ աշակերտ գրադարանավար	+
15.	Օժանդակել շնորհանդեսների, գրական քննարկումների, կինոդիտումների, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանը:		ուսուցիչ աշակերտ գրադարանավար	+
16	Աշակերտների համար կազմակերպել զրույցներ հետևյալ թեմաներով. *Ինչպես աշխատել դասագրքերով *Սիրեցեք գիրքը *Գիրքը և ես *Իմ անկեղծ բարեկամը		Գրադարանավար ուսուցիչներ	+

17	Ընթերցողական կուլտուրայի դաստիարակում: Անցկացնել զրույցներ. 1/ Գիրքը մեր բարեկամն է 2/ Ի՞նչ պետք է իմանա յուրաքանչյուր ընթերցող: 3/ Գիրքը մեզ պետք է երկար տարիներ՝ նույնիսկ դարեր: 4. Պահպանել դասագրքերը. այն ազգային հարստություն է:	յուրաքանչյուր ամիս	գրադարանավար հայոց լեզվի ուսուցիչներ	+
18	Կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ: Համագործակցել գրականության ուսուցիչների հետ 1. Միջոցառում՝ նվիրված Հովհաննես Թումանյանին 2. տեխնոլոգիա կար ու ձև, խոհանոց /արագ և գեղեցիկ/	նոյեմբեր ապրիլ	Մ.Բարսեղյան Ս. Մարտիրոսյ գրադար. գրադարանավար Լ. Սարգսյան	
19.	Օգնել տարրական դասարաններում կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառումներին:		գրադար. դասվարներ	
20.	Հ. Թումանյանի հեքիաթների մոտիվներով. Որևէ հեքիաթի բեմականացում		գրադար. դասվարներ	
21.	Օգնել դպրոցում անցկացվող «Նոր Տարվա» հանդեսին:	դեկտեմբեր հունվար		
22.	Կազմել ժամանակացույց. յուրաքանչյուր դասարան դասագրքերը գրադարան հանձնի առանց որևէ թերությունների ու պակասորդի	մայիս հունիս	մայիս հունիս	աշակերտ ծնող դասղեկ դասվար